## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2019 թվականի թիվ 57-Ա
ք. Երևան

### «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի մայիսի 27-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. հունիսի 3
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի հունիսի 3-ի թիվ 57-Ա որոշման

| Հեռուստածրագրի անվանումը | Թույլտվության ժամկետի ավարտը |
|---|---|
| «Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ»<br>«Կարուսել Ինթերնեյշնլ»<br>«Դոմ կինո»<br>«Բոբյոր»<br>«Դոմ Կինո Պրեմիում»<br>«Վրեմյա. դալյոկոյե ի բլիզկոյե»<br>«Տելեկաֆե»<br>«Մուզիկա Պերվոգո» | 31.12.2019թ. |
| «Կինոկոմեդիա»<br>«Ինդիյսկոյե Կինո»<br>«Կինոսերիա»<br>«Կուխնյա ՏՎ»<br>«ՏՆՏ Մյուզիք» | 31.12.2019թ. |
| «Մատչ! Պրեմիեր»<br>«Կինոպրեմիերա» | 31.12.2019թ. |